

**Կոտայքի մարզպետ. «Մենք համայնքների աշխատանքի արդյունավետությունը պետք է գնահատենք ըստ կրթադաստիարակչական ծրագրերի և մանկապարտեզների գործունեության որակի»**

08.08.2018

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը և ՀՀ-ում Ճապոնիայի Արտակարգ և Լիազոր դեսպան Ջուն Յամադան այսօր՝ օգոստոսի 8-ին, ներկա էին Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի Բջնի գյուղի մանկապարտեզի խաղահրապարակի բացմանը:

Ծրագիրն իրականացվել է Ճապոնիայի դեսպանատան աջակցությամբ՝ «Շենացնենք մեր գյուղը» հկ-ի կողմից:

Մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն արժևորեց Ճապոնիայի աջակցությունը Հայաստանին՝ ընդգծելով մի քանի կարևոր դրույթներ.

«Մենք համայնքների աշխատանքի արդյունավետությունը պետք է գնահատենք ըստ արտադպրոցական կրթադաստիարակչական ծրագրերի և մանկապարտեզների առկայության ու գործունեության որակի: Այս տեսանկյունից ես կարևորում եմ Ճապոնիայի դեսպանատան կողմից իրականացված այս ծրագիրը և կարծում եմ, որ բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ կառավարման, մեզ համար լավ օրինակ կարող է լինել այս երկրի փորձն ու մոտեցումները», - ասաց Ռոմանոս Պետրոսյանը:

Ճապոնիայի դեսպան Ջուն Յամադան իր խոսքում շեշտեց, որ չափազանց կարևորում է երեխաների ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր և կրթական առաջընթացն ու զարգացումը.

«Ճապոնիան շատ է կարևորում կրթական ամբողջ գործընթացում համապատասխան սարքավորումներ ունենալու անհրաժեշտությունը: Այսօրվա միջոցառումը մի այլ ապացույց է այն բանի, որ Ճապոնիան շարունակաբար օգնում և աջակցում է կրթական պայմանների բարելավմանը՝ ամենատարրական մակարդակից սկսած», - ասաց դեսպանը՝ մաղթելով երեխաներին պայծառ և ուրախ ապագա::

Չարենցավան խոշորացված համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանը մարզպետ Ռոմանոս Պետրոսյանին ներկայացրեց նաև խոշորացված համայնքի 8 մանկապարտեզների վիճակը. դրանցից 5-ը կապիտալ նորոգված են:

Կոտայքի մարզում ևս 3 համայնքներ հնարավորություն ունեն օգտվել այս ծրագրից՝ նույնատիպ խաղահրապարակներ ունենալով սեփական մանկապարտեզներում: